

1.2.2. *Գյուղատնտեսություն*

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2000թ. հունվար-հունիսին, փաստացի գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի տվյալներով, կազմել է 91,6 մլրդ. դրամ, որը 1999թ. մակարդակը գերազանցել է 3,6 տոկոսով, 2000թ. հունիս ամսվա համախառն արտադրանքը կազմել է մայիս ամսվա 163,5 տոկոսը (համադրելի գներով):

2000թ. հունիսի 1-ի դրությամբ հանրապետությունում, ցանքերի համատարած հաշվառման տվյալներով, կատարվել է 153127 հեկտար գարնանացան մշակաբույսերի ցանք, որը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 12563 հեկտարով կամ 8,9%-ով: Չնայած դրան, որոշ գյուղատնտեսական մշակաբույսերի գծով արձանագրվել է ցանքատարածությունների կրճատում: Այսպես, բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները կրճատվել են 137 հեկտարով կամ 0,3%-ով, բոստանային մշակաբույսերինը համապատասխանաբար՝ 240 և 6,1:

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի զարնանացանի ընթացքը հանրապետությունում, ցանքերի համատարած հաշվառման տվյալներով, մարզերի կտրվածքով, 2000թ. հունիսի 1-ի դրությամբ

(*հեկտար*)

Մարզերի անվանումը	Ընդամենը զարնանացան		<i>այդ թվում՝</i>			
			հացահատիկային և հատիկա-ընդեղենային մշակաբույսեր		կարտոֆիլ	
	1.06.2000թ.	1.06.2000թ. %-ով 1.06.1999թ. նկատմամբ	1.06.2000թ.	1.06.2000թ. %-ով 1.06.1999թ. նկատմամբ	1.06.2000թ.	1.06.2000թ. %-ով 1.06.1999թ. նկատմամբ
Արագածոտն	17715	101,2	13734	100,6	2069	105,4
Արարատ	7887	105,1	591	99,2	1092	110,9
Արմավիր	12690	96,7	709	116,0	1531	102,3
Գեղարքունիք	42548	133,7	27538	156,6	9933	105,4
Լոռի	16357	104,6	3249	125,4	10012	108,4
Կոտայք	9687	89,5	6448	83,0	1299	100,1
Շիրակ	21863	97,3	15720	94,8	2832	118,1
Սյունիք	10289	108,2	6066	107,9	1972	116,3
Վայոց Ձոր	2696	114,0	1805	110,8	236	113,5
Տավուշ	10683	112,3	2965	96,9	2830	101,5
ք.երևան	712	245,5	33	71,7	113	166,2
Ընդամենը ՀՀ	153127	108,9	78858	113,1	33919	107,5

Մարզերի անվանումը	<i>այդ թվում՝</i>							
	բանջարանոցային մշակաբույսեր		բոստանային մշակաբույսեր		տեխնիկական մշակաբույսեր		կերային մշակաբույսեր	
	1.06.2000թ.	1.06.2000թ. %-ով 1.06.1999թ. նկատմամբ	1.06.2000թ.	1.06.2000թ. %-ով 1.06.1999թ. նկատմամբ	1.06.2000թ.	1.06.2000թ. %-ով 1.06.1999թ. նկատմամբ	1.06.2000թ.	1.06.2000թ. %-ով 1.06.1999թ. նկատմամբ
Արագածոտն	1083	106,3	95	104,4	191	235,8	543	76,6
Արարատ	4162	98,4	553	130,4	672	280,0	817	79,3
Արմավիր	6367	98,5	2958	88,2	548	75,5	577	124,6
Գեղարքունիք	1429	105,0	-	-	167	16,7 անգամ	3481	101,3
Լոռի	1232	91,7	7	140,0	57	356,3	1800	73,4
Կոտայք	1612	101,5	-	-	177	236,0	151	171,6

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Սարգերի անվանումը	այդ թվում՝							
	բանջարանոցային մշակաբույսեր		բոստանային մշակաբույսեր		տեխնիկական մշակաբույսեր		կերային մշակաբույսեր	
	1.06.2000թ.	1.06.2000թ. %-ով 1.06.1999թ. նկատմամբ	1.06.2000թ.	1.06.2000թ. %-ով 1.06.1999թ. նկատմամբ	1.06.2000թ.	1.06.2000թ. %-ով 1.06.1999թ. նկատմամբ	1.06.2000թ.	1.06.2000թ. %-ով 1.06.1999թ. նկատմամբ
Շիրակ	1251	79,3	-	-	50	71,4	2010	108,4
Սյունիք	841	98,4	2	100,0	47	470,0	1361	103,0
Վայոց Ձոր	506	122,8	34	113,3	20	74,1	95	161,0
Տավուշ	1016	93,1	47	156,7	862	360,7	2963	128,7
ք. Երևան	462	298,1	4	133,3	-	-	100	5,6 անգամ
Ընդամենը ՀՀ	19961	99,7	3700	93,9	2791	186,8	13898	101,2

Բերված տվյալներից երևում է, որ ընդամենը հանրապետությունում զարնանացան մշակաբույսերի ցանքային տարածությունները 1999թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել են, սակայն որոշ մարզերում արձանագրվել է նաև զարնանացան մշակաբույսերի ցանքատարածությունների կրճատում: Այսպես, Արմավիրի մարզում նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ ցանքատարածությունները կրճատվել են 428 հեկտարով կամ 3,3%-ով, Կոտայքում համապատասխանաբար՝ 1132 ու 10.5 և Շիրակում՝ 618 և 2.7:

Գարնանացան հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել են 9120 հեկտարով կամ 13,1%-ով, սակայն Արարատի մարզում այն կրճատվել է 5 հեկտարով կամ 0,8%-ով, Կոտայքում համապատասխանաբար՝ 1322 և 17,0, Շիրակում՝ 861 և 5,2, Տավուշում՝ 96 և 3,1 և ք. Երևանում՝ 13 և 28,3:

Տեխնիկական մշակաբույսերի ցանքատարածություններն ավելացել են 1297 հեկտարով կամ 86,3%-ով, սակայն Արմավիրում դրանք կրճատվել են 178 հեկտարով կամ 24,5%-ով, Շիրակում համապատասխանաբար՝ 20 և 28,6, Վայոց Ձորում՝ 7 և 25,9:

Կերային մշակաբույսերի (ընթացիկ տարում ցանված) ցանքատարածություններն ավելացել են 163 հեկտարով կամ 1,2%-ով, սակայն Արագածոտնում դրանք կրճատվել են 166 հեկտարով կամ 23,4%-ով, Արարատում համապատասխանաբար՝ 213 և 20,7, Լոռում՝ 651 և 26,6:

2000թ. հուլիսի 1-ի դրությամբ գյուղատնտեսական տեխնիկայի սարքինության մակարդակը, մարզերի կտրվածքով

(սարքինության մակարդակը, տոկոսներով)

Սարգերի անվանումը	Տրակտորներ		Բեռնատար ավտոմեքենաներ		Հացահատիկահավաք կոմբայներ	
	1999թ.	2000թ.	1999թ.	2000թ.	1999թ.	2000թ.
Արագածոտն	60,5	69,4	70,9	74,7	64,0	77,4
Արարատ	77,1	74,3	79,8	77,8	77,8	74,4
Արմավիր	76,0	73,7	69,2	76,8	73,8	72,2
Գեղարքունիք	83,0	79,2	83,3	80,0	79,3	77,7
Լոռի	79,9	78,1	76,7	77,7	82,4	83,5
Կոտայք	83,2	81,2	82,7	81,7	85,8	95,1
Շիրակ	73,1	73,4	67,3	70,6	67,0	72,2
Սյունիք	72,2	71,5	93,0	83,6	71,1	67,6

Ստավել մանրամասն տվյալները գտնվում են «Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին 2000թ. հուլիսի 1-ի դրությամբ» վիճակագրական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1220-202)

Սարգերի անվանումը	Տրակտորներ		Բեռնատար ավտոմեքենաներ		Հացահատիկահավաք կոմբայներ	
	1999թ.	2000թ.	1999թ.	2000թ.	1999թ.	2000թ.
Վայոց Ձոր	83,8	83,0	83,7	88,2	58,3	87,5

1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

Տավուշ	75,9	70,2	76,5	66,3	57,0	61,8
ք. Երևան	48,9	53,3	28,4	45,6	100,0	100,0
ԸՆդամենը ՀՀ	75,9	74,7	77,3	75,7	72,1	76,0

Մարզերի անվանումը	Տրակտորային կցասայլեր		Տրակտորային խոտհնձիչներ		Մամլիչ բարդոձիչներ		Հատիկազտիչ մեքենաներ	
	1999թ.	2000թ.	1999թ.	2000թ.	1999թ.	2000թ.	1999թ.	2000թ.
Արագածոտն	76,6	82,7	76,2	79,1	79,2	85,0	65,3	61,5
Արարատ	85,6	81,6	84,2	81,3	75,0	78,6	70,8	73,9
Արմավիր	78,7	85,2	65,3	76,0	89,8	94,6	78,9	81,3
Գեղարքունիք	85,1	83,5	78,2	80,3	66,7	66,7	77,8	64,5
Լոռի	87,3	88,7	88,7	89,7	75,5	80,6	78,2	85,2
Կոտայք	84,2	86,0	88,2	93,9	59,1	66,7	76,1	80,0
Շիրակ	75,7	79,0	72,7	81,9	84,2	83,3	58,9	92,2
Սյունիք	79,8	81,0	80,0	74,1	82,8	86,6	73,2	64,4
Վայոց Ձոր	90,4	95,1	79,4	82,6	60,0	87,9	82,4	88,2
Տավուշ	77,0	83,0	79,7	67,2	30,4	84,0	47,1	57,1
ք. Երևան	52,4	78,3	100,0	57,1	-	100,0	-	-
ԸՆդամենը ՀՀ	81,3	83,7	79,5	80,9	75,1	84,4	70,1	75,8

Բերված տվյալները վկայում են, որ 2000թ. հունիսի 1-ի դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, հանրապետությունում գրանցվել է գյուղատնտեսական տեխնիկայի սարքիմության մակարդակի աճ գրեթե բոլոր տեսակների գծով (բացի տրակտորներից և բեռնատար մեքենաներից):

Անասնապահական մթերքների արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2000թ. հունիսի 1-ի դրությամբ

Մարզերի անվանումը	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով), հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2000թ.	2000թ. %-ով 1999թ. նկատմամբ	2000թ.	2000թ. %-ով 1999թ. նկատմամբ	2000թ.	2000թ. %-ով 1999թ. նկատմամբ
Արագածոտն	3,8	97,4	29,7	106,8	12,8	106,7
Արարատ	2,3	100,0	16,9	107,0	13,0	111,1
Արմավիր	2,2	91,7	16,9	107,0	20,7	113,1
Գեղարքունիք	5,4	98,2	42,2	106,8	9,7	102,1
Լոռի	3,8	97,4	29,6	106,5	8,1	101,2
Կոտայք	3,0	100,0	22,9	107,5	47,3	123,8
Շիրակ	4,3	97,7	33,4	107,0	15,6	113,9
Սյունիք	3,0	100,0	21,6	106,9	10,9	114,7
Վայոց Ձոր	1,6	94,1	11,8	107,3	10,4	114,3
Տավուշ	2,8	100,0	18,6	106,9	11,3	105,6
ք. Երևան	0,3	100,0	1,7	106,2	16,0	124,0
ԸՆդամենը ՀՀ	32,5	98,2	245,3	106,9	175,8	114,5

Բերված տվյալները վկայում են, որ 2000թ. հունվար-հունիսին իրացվել է 32,5 հազ. տոննա (կենդանի քաշով) անասուն և թռչուն, որը զիջում է 1999թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշը 0,6 հազ. տոննայով կամ 1,8%-ով: Միաժամանակ, գրանցվել է կաթի և ձվի արտադրության որոշակի աճ: Այսպես, կաթի արտադրությունը գերազանցել է 1999թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը 15,8 հազ. տոննայով կամ 6,9%-ով, իսկ ձվինը՝ 22,3 մլն. հատով կամ 14,5%-ով: Հարկ է նշել, որ ձվի արտադրության աճը նախորդ տարվա համեմատությամբ պայմանավորված է Կոտայքի մարզում և ք. Երևանում ձվի արտադրության ծավալների ավելացմամբ, համապատասխանաբար՝ 23,8 և 24,0%-ով: